ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2014 թվականի N 73-Ա

ք. Հրազդան

2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, ռազմական ուսումնական հաստատությունների առաջին կուրսերը նախատեսված քանակի թեկնածուներով համալրելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Ռազմական ուսումնական հաստատությունների առաջին կուրս ընդունվելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ուսումնական հաստատություններում իրականացնել ռազմական ուսումնական հաստատությունների առաջին կուրսեր ընդունվող թեկնածուների ընտրության և նախապատրաստման աշխատանքներ՝ համաձայն զինվորական կոմիսարիատներից ներկայացված պլան-առաջադրանքների:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին, զինվորական կոմիսարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1) Համակարգված ձևով նախապատրաստել միջոցառումների պլան ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար թեկնածուների ընտրության աշխատանքները բարձր մակարդակով կատարելու ուղղությամբ:

2) Ընտրել ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու թեկնածուներ, հաշվի առնելով նրանց ֆիզիկական պատրաստվածությունը, կարգապահությունը և գիտելիքների մակարդակը:

3) Թեկնածուներին մրցութային քննություններին գործուն աջակցություն ցուցաբերելու համար ուսումնական հաստատություններում կազմակերպել անհրաժեշտ առարկաների պարապմունքներ և խորհրդատվություններ:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առողջապահական ընկերությունների տնօրեններին՝ զինվորական կոմիսարիատների պահանջով, սահմանված կարգով անցկացնել թեկնածուների բժշկական զննություն զորակոչային բժիշկ-մասնագետների միջոցով:

4. Սույն որոշման կազմակերպման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի զինվորական կոմիսարների, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունների վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ